ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Փշատավան համայնքի 2012թ. 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների:

1-ին կիսամյակում հրավիրվել է ավագանու 4 նիստ, Առաջին նիստով փոփոխություն է կատարվել 2012թ բյուջեում:
Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի 4 անապահով ընտանիքներին, որի համար տրամադրվել է 110000 դրամ:
Համայնքի առևտրի օբյեկտների նկատմամբ պարբերաբար հսկողություն է իրականացվում:
30.01.2012թ կատարվել է շաբաթօրյակ, որի ժամանակ մաքրվել է համայնքի կենտրոնական ճանապարհները՝ կուլտուրայի տան և հարակից այգու տարածքը կուտակված ձյունից:
Խմելու ջրի ջրագիծը բավականին հին է, որի պատճառով անխուսափելի են ջրագծի վթարները : Բավականին աշխատանք է տարվել որպեսզի ձմռանը ինչքան հնարավոր է քիչ լինեն նմանատիպ վթարներ:
Բնակչությանը խմելու ջուր է մատակարարվում օրվա ընթացքում 4 ժամյա գրաֆիկովի փոխարեն 6 ժամ:
2-րդ նիստով գումար է տրամադրվել համայնքի 8 անապահով ընտանիքներին տրամադրվել է 265 000 դրամ դրամական օգնություն:
3-րդ նիստով որոշում է ընդունվել Փշատավան համայնքի ժամանակավոր սխեմայում փոփոխություններ կատարելու մասին:

Փշատավան համայնքի դպրոցի 2012 թվականի թվով 36 շրջանավարտների ծնողներին տրամադրվել է 5000 ական դրամ դրամական օգնություն:
4-րդ նիստով Փշատավան համայնքի սեփականություն հանդիսացող բուժամբուլատորիայի շենքի վարձակալության պայմանագրում կատարվել է փոփոխություն և վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարացվել է մինչև 08.08.2105թվականը:
Ազգային ժողովի 06.05.2012թվականի ընտրությունների նախաշեմին աշխատանքներ է կատարվել, հանդիպումներ է կազմակերպվել՝ տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների հետ , որպեսզի բնակչությունը ճիշտ կողմնորոշմի և ճիշտ ընտրություն կատարի:
Հողի հարկի արտոնությունների վերաբերյալ համայնքում կատարվել է աշխաանքներ , որի արդյունքում մեծ թվով հողատերեր օգտվել են այդ արտոնություններից:
Համայնքը արդեն 90 տոկոսով գազաֆիկացվել է և 6.29 կմ գազատարը հանձնվել է Հայաստանի Հանրապետությանը:
Ծրագրվել է կառուցել ևս 2 հակակարկտային նոր կայաններ:
Համայնքի գյուղամիջյան ճանապարհների մեծ մասը անանցանելի են, այս վիճակը մեղմացնելու համար հարթվել և 89 մեքենա ավազ է լցվել այդ ճանապարհների վրա, որի համար ծախսվել է 801000: Այս ամենի արդյունքում Արգավանդ Փշատավան համարյա << անանցանելի>> ճանապարհահատվածը դարձել է << անցանելի>>:

07.03.2012թ. համայնքում իրականացվել է շաբաթօրյակ, որի արդյունքում աղբից մաքրվել է Արզավանդ-Փշատավան ճանապարհահատվածի հարակից տարածքը կուտակված աղբից:
Մարտի 3-10 ը կազմակերպվել է շաբաթօրյակ, որի ընթացքում մաքրվել է գյուղամիջյան այգու տարածքը, սպիտակեցվել է այգու ծառերի բները և կատարվել է ծառերի սանիտարական հատումներ:
Ախտահանվել է խմելու ջրի հորը քլորամինով, որի համար ծախսվել է 150000 դրամ:
Համայնքի միջոցների հաշվին ձեռք է բերվե լուսապատճենահանող սարք, որով անվճար լուսապատճենահանվում են համայնքի բնակիչների անհրաժեշտ փաստաթղթերը:

1-ին կիսամյակի հողի հարկի և գույքահարկի հավաքագրումը հետևյալն է՝

1-ին կիսամսյակ	հողի հարկ	340000 դրամ
	գույքահարկ	481000 դրամ
	հողի վարձավճար	119700 դրամ
	տեղական տուրք	0 դրամ

Համայնքի ղեկավարի ժ/պ Վ. Ենգիբարյան